

չաբաթին. Աշխարհամատրին չաբաթն օրն (22 Ապրիլ 1626) : Էին ընդ նմա միարանք, որ էր նախ առաջին շնորհալի եւ ցանկալի սրբազան հայրն տէր Աստուածատուր յաթոռակալ սուրբ Էջմիածնայ արհիեպիսկոպոսն, նաեւ այլ Դ. եպիսկոպոսք եւ Բ. կրօնաւորք. զոր Տէր Աստուած շնորհաւոր առնէ. ամէն» :

Նոյն տարւոյն Մայիս 20էն հետեւեալ արձանագրութիւնն ունինք Ձամոսցա գտնուած եւ այժմ Վիեննա պահուած Ճաշոցի մը <sup>16</sup> մէջ. «Ի ՌՀԵ. Մայիս ԺԹ. օրն չաբաթ (1626 Մայիս 19, ուրբաթ!) եկաք ի Ձամոսցա պարոնտէր Մարտիրոս Սուրբ-Էջմիածնացի եւ պարոնտէր Եղիա Երզնկացի եւ տէր Սահաւուր արեղայ Լովցի, վասն նուիրակութեան եւ հիմնարկութեան սուրբ եկեղեցւոյ. եւ ի հայրապետութեան տեառն տէր Մեղքիսէթ կաթողիկոսին, որ էր ինքն ի Լով, եւ առաքեաց զմեզ ի Ձամոսցա քաղաք» : Իսկ Սիմէոն զպիր Լեհացի կը գրէ իւր Ուղեգրութեան մէջ. «Իսկ ի թվին ՌՀԵ. Սեպտեմբեր ամսոյ : Եկն ի Լէհ Էջմիածնայ Մեղքիսէթ կաթողիկոսն ծեր 'ւ ալեւոր, իսկաց թափեալ եւ յուժէ անկեալ, յոյժ գինեմոլ եւ արծաթասէր. ունելով ընդ ինքեան յոլով եպիսկոպոսս հոմանիս իւր եւ գինարբուս, իսկ յուսմանէ բնաւին հեռուս. եւ կացին ի Լով կէս տարի» <sup>17</sup> :

<sup>16</sup> Հ. Յ. Տաշեան, Յուդայի հայ. Ձեռագրաց Կայսերական Մատենադարանին ի Վիեննա, էջ 24. նոյնը՝ Կամենից, էջ 178 :

<sup>17</sup> Սիմէոն զպիր Լեհացւոյ Ուղեգրութիւն. Վիեն-